Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 12

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2024թ. հոկտեմբերի 29-ի նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 29 հոկտեմբերի 2024թ., ժ. 14:05
ավարտ՝ ժ. 15:10

Մասնակցում էին՝ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 7-ը:

Բացակայում էին՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Ա. Մանուկյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ Ա. Քթոյանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Հովակիմյանի փոխարեն մասնակցում էր Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության պետ Ա. Հայրապետյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրության պետական խորհրդի անդամներ Վ. Արևշատյանը, Լ. Պետրոսյանը, Ն. Բաղդասարյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Լ. Մելիքյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծ
2. Այլ հարցեր:

Նիստը վարում էր Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 7 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագրի) նախագիծը:

Պարոն Մնացականյանը նշեց, որ վիճակագրական տեղեկություն օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով՝ Ծրագրի նախագիծն առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով Արմստատի պաշտոնական կայքի Գլխավոր էջի Նորություններ բաժնում զետեղվել էր 14.06.2024թ.-ին, ինչպես նաև կարծիքի էր ներկայացվել ընտրանքային կարգով ընտրված հիմնական վիճակագրական տեղեկության 128 օգտագործողների (պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատախրավական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջաններ, հասարակական ու միջազգային կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ և այլն):

Ծրագրի նախագծի առնչությամբ պատասխան-գրություններ ստացվել էին 46-ից կամ նրանց 35.9 %-ից: Ընդ որում, պատասխան-գրությունների մեջ.

- առաջարկություններ և դիտողություններ ներկայացրել էին 19 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 41.3 %-ը,
- առաջարկություններ և դիտողություններ չէին ներկայացրել 27 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 58.7 %-ը:

Դիտողությունների և առաջարկությունների ընդունման կամ չընդունման հիմնավորմամբ Արմստատի կողմից կազմված ամփոփաթերթը, ինչպես նաև Ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվեց Հանրային խորհրդի անդամներին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում.

Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը պատասխանեց Հանրային խորհրդի անդամների հարցերին:

Արմստատն իր պատրաստակամությունը հայտնեց նաև մասնակցելու Հանրային խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերի քննարկումներին ոչ միայն Հանրային խորհրդի նիստերի ընթացքում, այլ ցանկացած ժամանակ և առաջարկվող ձևաչափով:

Նիստի եզրափակիչ խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

30.10.2024թ.

Հանրային խորհրդի նախագահ՝ Ա. Անանյան